

աշխատանք ունեմ և չ աշխատանք պահպակություն ունեմ ինչու ունեմ և ունեմ անունը, ունեմ անունը ուրքը և ընօրապը

ԳՐԱԿԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

Դ ԳԵ ՈՒ ԹԳ Դ ՈՒ Դ ՈՒ Ե Ա Ն

Յունիսի 11-ին իւր հայրենի Սիմֆերոպոլ քաղաքում վախճանուեց Գէորգ Դոդոսիեանը, որ անմահացել է մեր գրականութեան պատմութեան մէջ իւր «Ծիծեռնակ» բանաստեղծութեամբ։

Նա ծնուել է 1830 թ., փետրուարի 19-ին Սիմֆերոպոլում, այստեղ նա ստացել է իւր սկզբնական կրթութիւնը, շարունակել է ապա Լազարեան ճեմարանում 1842-1848 թ., իւր միջնակարգ ուսումը աւարտելուց յետոյ՝ նախ մտնում է Պետերբուրգի գեղարտեստից ճեմարանը, բայց 1851 թ., փոխագրուում է Դորպատ իրաւաբանութիւն ուսումնասիրելու։ Հանգուցեալ Դոդոսիեանը մէկն էր Դորպատի հայ ուսանողութեան այն շրջանի, որի անդամներից իւրաքաչիւրը այս կամ այն կողմով նշանաւոր է հանդիսացել մեր նոր գրականութեան պատմութեան մէջ։ Իւր ուսանողութեան ժամանակ ևս գրել է հայրենեաց կարոտով այնքան լի «Ծիծեռնակը»։ Իւր ուսումը Դորպատում աւարտում է 1859 թ., երբ Ղղլար է փոխագրուում Քալանթարեանների ընտանիքում անային դաստիարակի պաշտօնով մինչև 1867 թ., Այս թուականից նա ապրում էր իւր հայրենի քաղաքում 1877-1898 թ. իւրելով թաթարների ուսուցչական սեմինարիայում ուսուաց լեզուի ուսուցչի պաշտօն։ Հանգուցեալ վարել է նաև հայոց դպրոցների հոգաբարձուի պաշտօն։

Այս համառօտ կենսագրականից երկում է, որ հոգ
մեռտ է եղել նորա գործունէութիւնը ընդհանուր առ-
մայք, բայց այդ արգելքը չէ, որ նա անմահ մնայ Հայոց
նորագոյն գրականութեան պատմութեան մէջ իւր «Միծեռ-
նակք-ով», որ Հայոց մէջ ամենից աւելի ժողովրդականու-
թիւն ոտացած երգերից մէկն է։ Դոգուխեանը ունի էլի
մի քանի ուստանողական և մանկական երգեր, առաջիննե-
րը մի ժամանակ սիրով էին երգում։ Պարոն Յ. Պակեն-
դիարեանի վկայութեաք (Մշակ № 129) հանգուցեալը
պէտք է ուրիշ ձեռագիր աշխատութիւններ էլ թօղած
լինի։

Յունիսի 22-ին իւր մահկանացուն կնքեց Տաճկահայոց յուստիք յուստիք բանաստեղծ Միսաք Մեծարենց 23 տարեկան ծաղիկ հասակում։ Նա ծնուած էր Ակնայ շրջանի Բենիկեան գիւղի մէջ։ Նախնական կրթութիւնն սուացել է հայրենի գիւղում, ապա փոխադրուել է Մարզուանի ամիրիկեան քոլէճը, ուր մի քանի տարի մնալուց յետոյ՝ աշակերտել է Պօլսոյ կենդրոնական վարժարանին, Սակայն թոքախտի սկզբնաւորութիւնն արգելք եղաւ այստեղ վերջացնել նրան իւր ուսումը։

Աշակերտական մատաղ հասակից արդէն նա ցոյց էր տուել իւր բանաստեղծական ձիրքը։ Կարճ ժամանակի մէջ հրատարակեց «Ծիածան» և «Նոր տաղեր» վերնագրով բանաստեղծութիւնների ժողովածուները, որոնք մեծ համակրութեամբ ընդունուեցան Պօլսահայ լրագրութեան կողմից։ Տարաբազտաբար մեր ձեռքը չեն հասել վաղամեռիկ բանաստեղծի երկերը, ուստի և անկարող ենք մեր անմիջական տպաւորութիւնները արտայայտել նորա բա-

նաստեղծական տաղանդի և կարողութեան մտսին։ Սակայն Պօլսոյ հայ թերթերը վերոյիշեալ երկերի հրատարակութեան և այժմ մահուան առթիւ երկար գրախօսականներ և գնահատումներ ունին տուած, հատուածներ բերած, որոնցով կարելի է մօտաւոր գաղափար կազմել։ Դեռևս և Արարատուի նախնթաց №-ի մէջն էր, որ մեր աշխատակից պարոն Մ. Բերբերեան ամփոփ տեղեկութիւն տուեց այդ մտսին Պօլսոյ թերթերի հետեւզութեամբ։ Միսակ Մեծարենց օժուած էր մնպայման բանաստեղծական տաղանդով և արդէն սիմբոլիք ուղղութեան ներկայացուցիչն էր Պօլսահայ գրականութեան մէջ։ Ինչպէս երեսում է, նա ազգուած էր նարեկացուց և իւր տուղերի մէջ դործ է ածում երբեմն նարեկացուն և Ժ. դարուն յատուկ նմանահնչիւն տառերի և բառերի կրկնութիւնը. «Ճայրիներու ծայրածաւալ ծաղիկներուն», «Ծափ կզարնէ, ծիծաղէն ծըլէր է ծիլն իր այտին»։ Նրան յատուկ էր մասամբ ևս նարեկացու միստիքականութիւնը. «Բիւզանդիոն»-ի մէջ թ. 3591 Գեղամ Բարսեղեան բնուրոշում է վաղամեռիկ բանաստեղծի տաղանդը որպէս «Բնուրենապատ», խորհրդանշական, մարդկայնական»։

«Պատկերալից խորհրդանշանակութեամբ մը, Մեծարենցի քերթուածները կներկայացնեն բանաստեղծութիւն մը՝ թերեւնոնր Պօլսահայ գրականութեան համար, անմիմանալի՝ բութ ու տիեզե միտքերու»,.... «Նկարչուկան խանդ մը կյայտնուի եր բարոր քերթուածներուն մէջ, մերթ վառ և վառ երանդներով, մերթ փափուկ ու խոսափուկ գիծերով ու կիսալոյս թերաստուերներով....; Եթ արուեստը զերծ մնացած ձեւագաշտ բժանդը սպաննող հնհնուքներէն, քանի որ բանաստեղծին ստեղծագործելու աւելունը պէտք չէ զդացած տառնց, մերթ կնճռու՝ քանի որ ապրած վարկենին շատապ յորդաղեղ արտայայտութիւնն եղած է արևելեան գունագեղ պերճանքով մը կը յատկանշուի։ Իթ բարբառը, նկարէն ու փողփողէնէջ աշխարհաբար մը, ուր գառական, ժողովրդական ու գաւառական բառերը կյեռուին քով քովի, յաճախ վիժանուաւ երաժշատականութիւն մը, ձայներու ճոխ երփում մը կերկարածգէ։

Յուշիկ փախչող իշխուան ծիրանի լոյսն է զուարթ,

Ոսկե թելեր՝ պլուտոն խռւնկե թաւեիշ մշուշին,
Կապոյտ ծովեր, ծիածան, ծփուն, ծայներ, միոտինկ լարդ,
Լոյսէ արցունք մոմերու՝ որոնք հանդարտ կը մաշին:

Ահա մի քանի հատուածներ ես, որոնք այս կամ
այն կողմից կարող են գաղափար տալ Մեծարենցի քնարի
յատկութիւնների մասին:

Համբոյրիգ, գիշե՛ր, պատուհանս է բաց,
Թող որ լիառատ՝ ծըծեմ հեշտագին,
Կաթը մեղմահոս լոյսիդ տարփանքին,
Ու զով շաղերուդ կախարդանքը, թաց:

Սա իրեկունն ըլլայի ես,
Նի երգովը թուշուներուն,
Ու տարբերուն աղաղակովը տրոփուն,
Սա իրեկո՞ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
Համայնական չքնաղ, քաղցրիկ, լուսադ էս,
Եւ տմբնուն տայի հուրքէս, սկիէս,
Սա իրեկո՞ւնն ըլլայի ես:

Սարերուն մէջ կոծկոծի այգուն՝ կոչնակը վանքին,
Եղնիւները մթնշաղին դէպ ի դետակ կըդիմեն,
Աղջիկ մըն է կալծ ես հովը, գինով մուրափ բուրումէն
Որ ջուրերու վրայ կը դառնայ սարսուռի պարն հեշտագին:

Մեծարենց իւր ողբերկական մահուամբ Դուրեանի
զուգակիցը եղաւ: Սա ևս նորա նման յուսալից և տա-
զանգաւոր, թոքախտով բռնուած, երիտասարդ ծաղիկ
հասակում, նոյն միջավայրում, ապրելու բաձանքով, բայց
միւնոյն ժամանակ մահուան կանխազգացութեամբ լցուած:

Պիտի ըմպեմ բոցն արեին, ճառագայթի՛ եմ ծարաւի,
Պիտի ծըծեմ բոյըն առտըւան՝ հոգւոյս համար որ հիւանդ է:
Եղամ, ով արև, շառափիներով ոսկեժայր,
Մառախլապատ երկունքին մէջ՝

Աւը մտածումը կ'դեգերի ռւզեմոլար, Շահնշահ պահ
Շողմ', շողմ', բարե՛ արև, հիւանդ եմ Եւ ուշաբն

+ b q h u s k t r h p d h q u c b u n

(1851-1908)

Պոլսահայ դրականութեան նշանաւոր գէմքերից մէկն էր Եղիա Տէմերճիպաշեանը, որպէս բանաստեղծ և իմաստասէր, Ծնուած է 1851 թ, Խասդիւղում, իւր ուսումնատացել է Ներսիսեան և ապա Շահնազարիան Վարժարաններում։ Երկու տարի ևս ուսել է Մարտէլի առեւտրական դպրոցում։ Արտասահմանից գառնալով կարծիամանկով զբաղուել է ուսուցչութեամբ, բայց առաւելապէս նուիրուել է գրական ասպարիզին։ Իրրե Երիտասարդ գրագէտ աշխատակցել է «Մասիսին», «Արևելքին» և միւս թերթերին։ Ինքը հրատարակէլ է «Գրական և իմաստասիրական շարժումը» և 1855 թուից յետոյ նաև Պարոնեանի «Երկրագունոտ» թերթերը։ Ունի և մի քանի գըրքոյկներ կրթական և իմաստասիրական բովանդակութեամբ՝ «Բառարան Փիլիսոփայական» 1879, «Երջագայութիւն իմ թաղիս մէջ» 1880, «Ճառ աղջկանց դաստիարակութեան վրայ» 1880, Ֆրանսերէն-Հայերէն և Հայերէն-Ֆրանսերէն» բառարաններ։ Բայց նա իւր գրական փառքը վաստակել է լրագրութեան մէջ ցրուածքաղմաբովանդակ յօդուածներով և քերթուածներով։ Նախկին Պատրիարք Տ։ Մազաքիա Արքեպիսկոպոսի կարգադրութիւնը՝ հաւաքել նորա ցրուած երկերը և առանձին հրատարակել՝ կլինի ոչ միայն լաւագոյն յարգանքը

Հանդուցեալ գրագիտի յիշատակին, այլ և գնահատելի
ծառայութիւն մեր գրականութեան համար։ Պոլսոյ թեր-
թերը շատ գնահատում են նորա գրական և իմաստա-
սիրական յօդուածները, թէ և երբեմն փոփոխական և հա-
կառական ազգեցութիւնների և տպաւորութիւնների հա-
մեմատ, և հոչակում որպէս «գրական և կրթական ռահ-
վիրան ու առաջնորդն» շատերի համար։ Որպէս իմաս-
տասէր շատ հակուած է եղել Շոպէնհաուերի փիլիսոփա-
յութեան և բուդգայականութեան։ Նա յոռետես էր նաև
կեանքի մէջ, որին շատ նպաստում էր և ջղային հիւան-
դութիւնը։ Տասը տարուց ի վեր Եղիա Տէմիրճիպաշեան
տառապում էր հոգեեկան հիւանդութեամբ և մեռած էր
հայ գրականութեան համար։ Վերջին ժամանակիները նա-
զանում էր սնունդ ստանալ։ Յուլիսի 6-ի գիշերը՝ լոյս
7-ին նրան կախուած են դտնում իւր սենեակում։ Պոլսոյ
հոգեորականութեան և գրագէտների ու լրագրողների
ստուար խումբ ներկայ է եղել յուղարկաւորութեան հան-
գիսին և այդպիսով պատուել գժբաղդ գրադեալ յիշա-